# «Ոսկե խաղակոշիկի» հավակնորդները

*Արման Քարամյանը թեկնածուների թվում է*

1968 թ. «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթը եվրոպական երկրների լավագույն ռմբարկուներին պարգեւատրում էր համապատասխանաբար ոսկե, արծաթե եւ բրոնզե խաղակոշիկով: «Ոսկե խաղակոշիկի» առաջին դափնեկիրը Պորտուգալիայի «Բենֆիկայի» լեգենդար ֆուտբոլիստ Էյուսեբիոն էր, որը 1968 թ. մրցաշրջանում ազգային առաջնությունում խփել էր 42 գնդակ: 5 տարի անց նա կրկին ճանաչվեց Եվրոպայի լավագույն ռմբարկու (40 գոլ): Էյուսեբիոյից բացի պատվավոր



այդ մրցանակի դափնեկիրներ են դարձել ճանաչված այլ ռմբարկուներ, այդ թվում գերմանացի Հերդ Մյուլլերը (1970 թ.՝ 38 գոլ, 1972 թ.՝ 40), բուլղարացի Պետար Ժեկովը (1969 թ.՝ 36), ֆրանսիացի Իոսիպ Սկոբլարը (1971 թ.՝ 44), ավստրիացի Հանս Կրանկլը (1978 թ.՝ 41), պորտուգալացի Ֆեռնանդու Գոմեշը (1983 թ.՝ 36, 1985 թ.՝ 39), անգլիացի Իան Ռաշը (1984 թ.՝ 32), հոլանդացի Մարկո վան Բաստենը (1986 թ.՝ 37): Նրանք իրոք արժանի էին ուժեղագույնի կոչմանը: Սակայն մրցանակի խաղարկման պատմության մեջ քիչ չեն եղել դեպքեր, երբ լավագույն ռմբարկու է ճանաչվել ֆուտբոլային ոչ հանրահայտ տերության ներկայացուցիչը: Դրա վառ օրինակը կիպրացի Սոտիլիս Կայաֆասի հաղթանակն էր 1976 թ. մրցույթում (39 գոլ): 70-ական թթ. կիպրական ֆուտբոլը եվրոպայում դասվում էր հետնապահների շարքին: Նույնը կարելի է ասել 1988 թ. թուրք Թանժու Չոլակի հաղթանակի վերաբերյալ, որը 39 գնդակով դարձավ «Ոսկե խաղակոշիկի» դափնեկիր: Եզակի չէին այն դեպքերը, երբ ձգտելով անպայման դառնալ մրցույթի դափնեկիր, տարբեր երկրներում ռմբարկուները սկսեցին իրենց գոլերի թիվն ավելացնել ի հաշիվ պայմանավորված խաղերում խփած բազմաթիվ գնդակների: Տարեց ֆուտբոլասերները, անշուշտ, հիշում են, թե ինչպես 1985 թ. «Պնեպրի» հարձակվող Օլեգ Պրոտասովին հաջողվեց խփել 35 գնդակ, ինչը 1950 թ. Նիկիտա Սիմոնյանի սահմանած արդյունավետության ռեկորդը գերազանցում էր մեկ գոլով: Դրանում իրենց աջակցությունն են ունեցել մրցակից թիմերի պաշտպանները, որոնց բացահայտ թողտվությամբ էին խփվում գոլերը: Արդյունքում Պրոտասովն այդ տարի արժանացավ «Արծաթե խաղակոշիկի»: Մարզական անազնիվ պայքարում խփած գոլերը, փաստորեն, արժեզրկեցին «Ոսկե խաղակոշիկը»: Ուստի 1992 թ. «Ֆրանս ֆուտբոլը» որոշեց այլեւս չխաղարկել մրցանակը: Հարկավոր էր մրցանակի խաղարկության նոր կարգ մշակել: Եվ ահա, տարիներ անց ռմբարկուներին սկսեցին կրկին շնորհել պատվավոր մրցանակները: Սակայն հաղթողը որոշվում է արդեն այլ կերպ: Հաշվի է առնվում ոչ թե խփած գնդակների քանակը, այլ վաստակած միավորների թիվը: Ելնելով տվյալ երկրի մակարդակից, եվրոպական երկրների առաջնությունները բաժանվել են 3 կարգի իրենց համապատասխան գործակցով: Ցածր մակարդակի առաջնությունների, որոնց թվին է պատկանում նաեւ Հայաստանը, գործակիցը 1 է: Միջին մակարդակի առաջնությունների գործակիցը 1,5 է, իսկ առաջատար ֆուտբոլային երկրների առաջնությունների գործակիցը 2 է: Այսպիսով, յուրաքանչյուր երկրի ռմբարկուի խփած գոլերը բազմապատկվում են երկրի համապատասխան գործակցով եւ ստացված միավորների քանակով էլ որոշվում են լավագույնները:

Այսօրվա դրությամբ «Ոսկե խաղակոշիկի» համար մրցավեճում առայժմ առջեւից է ընթանում էստոնիայի ՏՎՄԿ-ի հարձակվող Անդրեյ Կռիլովը, որը վաստակել է 37 միավոր: Երկրորդ տեղում Արման Քարամյանն է (36): Նրանց ցուցանիշները վերջնական են, քանի որ երկրի առաջնությունները վաղուց ավարտվել են: Իսկ ահա եվրոպական մի շարք երկրներում առաջնություններն անց են կացվում աշուն-գարուն մրցակարգով, այդ իսկ պատճառով էլ ավարտվելու են մայիսին: Այնպես որ, միայն մայիսին հայտնի կդառնա «Ոսկե խաղակոշիկի» դափնեկիրը: 3-րդ տեղում ընթացող Հենրիկ Լարսոնը լավ հնարավորություն ունի գլխավորելու ցուցակը: Շոտլանդիայում առաջնությունը կվերսկսվի փետրվարին: Իհարկե, հաղթելու մեծ հնարավորություններ են պահպանում հատկապես այն երկրների ներկայացուցիչները, որոնց առաջնությունների գործակիցը 2 է: Այսօրվա դրությամբ մրցանակի հավակնորդների ցուցանիշներն այսպիսին են.

| | | Գոլ | Գործ. | Միավոր |
|---|---|---|---|---|
| 1. Անդրեյ Կռիլով | ՏՎՄԿ էստոնիա | 37 | 1 | 37 |
| 2. Արման Քարամյան | «Փյունիկ» Հայաստան | 36 | 1 | 36 |
| 3. Հենրիկ Լարսոն | «Սելթիկ» Շոտլանդիա | 23 | 1,5 | 34,5 |
| 4. Մաթեյա Կեժման | «Էյնդհովեն» Հոլանդիա | 18 | 1,5 | 27 |
| 5. Ջեյմս Բիտտի | «Սաութհեմփթոն» Անգլիա | 13 | 2 | 26 |
| 6. Ալան Շիրեր | «Նյուքասլ» Անգլիա | 13 | 2 | 26 |
| 7. Ալիտոն | «Վերդեր» Գերմանիա | 13 | 2 | 26 |
| 8. Հարալդ Բրատբակ | «Ռուսենբորգ» Նորվեգիա | 17 | 1,5 | 25,5 |
| 9. Տյերի Անրի | «Արսենալ» Անգլիա | 12 | 2 | 24 |
| 10. Քրիստիան Վյերի | «Ինտեր» Իտալիա | 12 | 2 | 24 |
| 11. Ակսել Լավարե | «Բրեգենց» Ավստրիա | 16 | 1,5 | 24 |
| 12. Մաքսիմ Գրուզնով | «Տրանս» էստոնիա | 24 | 1 | 24 |
| 13. Պիտեր Իջե | «Մալմյո» Շվեդիա | 24 | 1 | 24 |
| 14. Տոր Համրե | «Ֆլորա» էստոնիա | 23 | 1 | 23 |
| 15. Միխայիլ Միխոլապ | «Սկոնտո» Լատվիա | 23 | 1 | 23 |

## 20-ամյա վաղեմության ռեկորդը գերազանցվեց

Եկատերինբուրգում անցկացված թեթեւ ատլետիկայի միջազգային մրցումներում 20-ամյա մոսկվացի մարզուհի Աննա Չիչերովան բարձրացատկում սահմանեց մարզաւուհիների համար Ռուսաստանի նոր ռեկորդ՝ հաղթահարելով 2 մ 4 սմ բարձրություն: Դա 1 սմ-ով գերազանցում է լեգենդար Տամարա Բիկովայի ռեկորդը, որ սահմանվել էր 20 տարի առաջ՝ 1983 թ. մարտի 6-ին Բուդապեշտում: Հետաքրքրական է, որ այդ ժամանակ նոր ռեկորդակրուհին դեռ չէր ծնվել:

2 մետրի սահմանագիծը հատեց նաեւ Ելենա Ելեսինան (2 մ 1 սմ): Միջազգային մրցաշարերում հազվադեպ է պատահում, որ միանգամից երկու մարզուհիներ գերազանցեն 2 մ-ի սահմանագիծը: Համառ մրցապայքար ծավալվեց տղամարդկանց 5 կմ քայլքում: Հաղթող ճանաչվեց 1999 թ. աշխարհի չեմպիոն Իլյա Մարկովը Եկատերինբուրգից, որը 8 վրկ-ով գերազանցեց 2001 թ. աշխարհի եւ 1998 թ. Եվրոպայի չեմպիոն Լեհ Ռոբերտ Կոժենեւսկուն:

## «Միլանը» կհամալրի կազմը

Իտալական «Միլանը» պատրաստ է 18 հազար եվրո վճարել «Լացիոյի» սերբ կիսապաշտպան Դեյան Ստանկովիչի տեղափոխման համար: Գործարքը կարող է տեղի ունենալ մոտ ժամանակներս, եւ բացառված չէ, որ առաջնության 2-րդ շրջանը Ստանկովիչն անցկացնի միլանցիների կազմում: Ինչ վերաբերում է հաջորդ մրցաշրջանին, ապա «Միլանը» մտադիր է կազմը համալրել երեք երիտասարդ հեռանկարային ֆուտբոլիստներով: Խոսքը «Պերուջայի» 19-ամյա կենտրոնական պաշտպան նիգերիացի Քրիստիան Օբոդոյի, «Բրեշիայի» աջ պաշտպան կոստառիկացի Մարտինասի եւ բրազիլական ֆուտբոլի ծագող «աստղ», հարձակողական ոճի կիսապաշտպան Դիեգոյի մասին է:

ՎԱՐԿԱՆԻՇ

## Ուժեղագույնը Իսպանիայի առաջնությունն է

Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է աշխարհի 50 ուժեղագույն առաջնությունների ցանկը: Ինչպես եւ անցյալ մրցաշրջանում, այս անգամ էլ ուժեղագույնն է ճանաչվել իսպանական առաջնությունը: 2-րդ տեղում Անգլիայի պրեմիեր-լիգան է, 3-րդում՝ Իտալիայի «Ա» սերիայի առաջնությունը, որին հաջորդում են Գերմանիայի, Արգենտինայի եւ Ֆրանսիայի ազգային առաջնությունները: Բրազիլիայի առաջնությունը 9-րդն է, Ռուսաստանի պրեմիեր-լիգան՝ 19-րդը: Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից 50 լավագույնների ցանկում տեղ են զբաղեցրել նաեւ Ուկրաինայի (24-րդ) եւ Ուզբեկստանի (36-րդ) առաջնությունները: Ցուցակը եզրափակում է Սաուդյան Արաբիան:

ԹԵՆԻՍ

## Վիճակահանությունն անվանել է ուժեղագույններին

Հունվարի 13-ին կմեկնարկի թենիսի «Մեծ սաղավարտ» մրցանակի խաղարկության այս մրցաշրջանի անդրանիկ մրցաշարը՝ Ավստրալիայի բաց առաջնությունը: Արդեն կայացել է մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը եւ որոշվել են կանանց եւ տղամարդկանց մրցաշարերի 32-ական ուժեղագույն թենիսիստ-թենիսիստուհիները: Թենիսիստների դասակարգման առաջատար Լեյթոն Հյուիթը վիճակահանությամբ ստացել է առաջին համարը: 2-3-րդ տեղերում են Անդրե Աղասին եւ Մարատ Սաֆինը: Արգենտինահայ Դավիթ Նալբանդյանին բաժին է հասել 10-րդ համարը: Սարգիս Սարգսյանն իր վարկանիշով ուժեղագույնների թվում չի ընդգրկվել: Ավստրալիայի բաց առաջնության 1999 թ. հաղթող Եվգենի Կաֆելնիկովը վիճակահանության ցանկում 22-րդն է:

Կանանց մրցաշարի առաջին 3 համարները «զբաղեցրել» են ամերիկացի թենիսիստուհիները՝ Սերենա ու Վենուս Ուիլյամս քույրերը եւ Ջենիֆեր Կապրիատին: Մագդալենա Մալեեւա-Բերբերյանը ցանկում 11-րդն է:

## Ռոմարիոն կրկին կխաղա «Ֆլամենգոյում»



Ֆուտբոլի աշխարհի 1994 թ. չեմպիոն եւ լավագույն ֆուտբոլիստ Ռոմարիոն հնարավոր է կրկին վերադառնա «Ֆլամենգո»: 37-ամյա ֆուտբոլիստի պայմանագրի ժամկետը «Ֆլումինենսեի» հետ ավարտվել է եւ ակումբի ղեկավարությունը նրան չի առաջարկել երկարաձգել պայմանագիրը: Հետաքրքրական է, որ հենց «Ֆլամենգոյի» ղեկավարությունը 1999 թ. մրցաշրջանի ավարտին հրաժարվեց Ռոմարիոյի ծառայություններից՝ պատճառաբանելով, որ ֆուտբոլիստը հաճախակի խախտում է մարզական ռեժիմը: Տեղափոխվելով «Վասկո դա Գամա», Ռոմարիոն թիմին հասցրեց չեմպիոնական բարձունքի՝ աչքի ընկնելով ռմբարկուի հատկանիշներով (20 գոլ 28 խաղում):

Բրազիլական ֆուտբոլի հանրահայտ «աստղերից» մեկը ֆուտբոլային իր փառահեղ կենսագրությունը սկսել է 1985 թ. հենց «Վասկո դա Գամա» թիմում: Թիմի կազմում անցկացրած չորս մրցաշրջանում նա աչքի ընկավ բարձր արդյունավետությամբ՝ 122 խաղում խփելով 80 գնդակ: 1988/89–1992/93 թթ. մրցաշրջաններում Ռոմարիոն ֆուտբոլային իր տաղանդով փայլատակեց հոլանդական «Էյնդհովենում»: Հոլանդիայի առաջնություններում անցկացրած 207 հանդիպումներում Ռոմարիոն իր հաշվին գրանցեց 98 գոլ: Հաջորդ 2 մրցաշրջաններում բրազիլացի ֆուտբոլիստն արդեն իսպանական «Բարսելոնում» էր: Թիմի կազմում նրա նորամուտը շատ տպավորիչ էր: 1993/94 թթ. մրցաշրջանում Ռոմարիոն 33 հանդիպումներում խփեց 30 գնդակ՝ դառնալով լավագույն ռմբարկու: Նա գերազանց մարզավիճակում էր, ինչը հաստատեց նաեւ 1994 թ. ամռանը կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնությունում: 7 մրցաշրջան Եվրոպայում հանդես գալուց հետո (253 խաղում 132 գոլ) Ռոմարիոն վերադարձավ հայրենիք՝ հագնելով «Ֆլամենգոյի» մարզաշապիկը: Այս թիմի կազմում անցկացրած 145 խաղերում Ռոմարիոն խփեց 132 գոլ՝ կրկին ցուցադրելով բարձր վարպետություն: Այդ ընթացքում նա շատ կարճ ժամանակամիջոց խաղաց նաեւ իսպանական «Վալենսիայում» (9 խաղում 5 գոլ), իսկ 2000 թ. տեղափոխվեց «Վասկո դա Գամա»: Ճանաչված ռմբարկուն ֆուտբոլային իր գործունեության ընթացքում Բրազիլիայի, Հոլանդիայի եւ Իսպանիայի առաջնություններում ընդհանուր առմամբ անցկացրել է 510 խաղ եւ խփել 429 գնդակ: Այս ցուցանիշը ներկայումս գործող ֆուտբոլիստների մեջ լավագույնն է: Իսկ համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ երկրի առաջնություններում խփած գոլերի քանակով Ռոմարիոյին գերազանցում են միայն չեխ Յոզեֆ Բիքանը (518 գոլ 341 խաղում) եւ հունգարացի Ֆերենց Պուշկաշը (511 գոլ 533 խաղում):

## Լավագույնը Սկոլարին է

Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիայի անցկացրած հարցման արդյունքներով բրազիլացի Լուիս Ֆելիպե Սկոլարին ազգային հավաքականների մարզիչների շրջանում ճանաչվել է լավագույնը: Հարցմանը մասնակցել են աշխարհի 91 երկրների ֆուտբոլային մասնագետներ: 54-ամյա Սկոլարին մրցույթի արդյունքներով վաստակել է 286 միավոր, ինչն այդ անվանակարգում ռեկորդային ցուցանիշ է: Նախկինում լավագույն արդյունքը պատկանում էր Ֆրանսիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ռոժե Լեմերին, որը 2000 թ. վաստակել էր 271 միավոր:

2-րդ տեղում է Հարավային Կորեայի հավաքականի գլխավոր մարզիչ Գուուս Հիդդինկը (179 միավոր): Նրան հաջորդում է Թուրքիայի ընտրանու մարզիչ Սենոլ Գյունեշը (155): Ընդհանուր առմամբ մասնագետները նշել են 15 մարզիչների: Նրանց թվում են նաեւ Ռուդի Ֆյոլլերը (Գերմանիա)՝ 92 միավոր, Բրունո Մեցուն (Սենեգալ)՝ 79, Բրյուս Արենան (ԱՄՆ)՝ 19, Սվեն Գորան Էրիկսոնը (Անգլիա)՝ 18, Ֆիլիպ Տրուսյեն (Ճապոնիա)՝ 11, Խոսե Անտոնիո Կամաչոն (Իսպանիա)՝ 10, Մարսելո Բյելսան (Արգենտինա)՝ 9, Դիկ Ադվոկաատը (Հոլանդիա)՝ 8, Միկ Մաքարտին (Իռլանդիա)՝ 7, Վինֆրեդ Շեֆերը (Կամերուն)՝ 6, Խավյեր Ագիրեն (Մեքսիկա) եւ Ջովանի Տրապատոնին (Իտալիա)՝ 5-ական:

Ազգային հավաքականների մարզիչների շրջանում լավագույնին որոշելու մրցույթն անցկացվում է 1996 թ.: Մրցույթի առաջին դափնեկիրը Գերմանիայի հավաքականի մարզիչ Բերտի Ֆոգտսն է: Հետագա տարիներին լավագույն են ճանաչվել Մարիո Զագալոն (Բրազիլիա), Էմե Ժակեն (Ֆրանսիա), Վանդերլեյ Լյուքսեմբուրգոն (Բրազիլիա), Ռոժե Լեմերը (Ֆրանսիա) եւ Մարսելո Բյելսան (Արգենտինա):

## Տարիքային սահմանափակումը կվերացվի

ՖԻՖԱ-ն մտադիր է մրցաշրջանից վերացնել մրցավարների տարիքային ցենզը: Մինչ այդ ՖԻՖԱ-ի մրցավարի կոչմանը կարող էին արժանանալ մինչեւ 45 տարեկան մրցավարները: Նման որոշում ընդունվել է Մադրիդում կայացած ՖԻՖԱ-ի գործկոմի նիստում: Այնպես որ, լավագույն մրցավարները հնարավորություն են ստանում շարունակել իրենց մրցավարական գործունեությունը նաեւ 45 տարին լրանալուց հետո:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

